ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Երևան, Կառավարական տուն 3

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ**

## Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ

1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.2-85),
2. նույն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-283),
3. նույն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-401),
4. Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-87),
5. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպ-ման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-264),
6. նույն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-267),
7. Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշի-նության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-128)։

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը։ Կից ներկայացվում է պաշտոնների անձնագրերը։**

**Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2026 թվականի հունվարի 20-ը ժամը 10:00։**

**Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք դիմումներ կարող են ներկայացնել e-request.am էլեկտրոնային հասցեին։ Տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հեռ. 010515133։**

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**